ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Դաշտավան Գ.Տոնոյան փող. 21 հեռ. /0236/ 6-39-80

N 1-19 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
10 հունվարի 2019թ.

2019 թվականի հունվարի 10-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնքում կայացավ հանրային լսումներ:
Լսումներին մասնակցում էին համայնքի ղեկավար Վ.Խանաղյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, առաջատար և առաջին կարգի մասնագետները, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ: Համայնքի ղեկավարը ներածական խոսքում նշեց, որ Դաշտավան համայնքի 2018 թվականի բյուջեն կատարվել է 100.6 տոկոսով:

1. Համայնքի ղեկավար Վ.Խանաղյանը ներկայացրեց 2018 թվականի 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքները՝
1/1 Համայնքի ղեկավարի մոտ ընդունելության մասնակցել է 100 քաղաքացի և բոլորին տրվել են սպառիչ պատասխաններ:
1/2 Կազմակերպվել է միջոցառում սեպտեմբերի 21-ի կապակցությամբ՝ 300.0 հազ. դրամ, եկեղեցու բացման կապակցությամբ՝ 200.0 հազար դրամ և ամանորի միջոցառման կապակցությամբ 100.0 հազար դրամ և նվերներ ձեռք բերելու նպատակով 252.4 հազար դրամ:
1/3 Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին համայնքի բյուջեից հատկացվել է 1655.0 հազար դրամ դրամական օգնություն:
1/4 Համայնքի Նոր Թաղ 1-ին փողոցի կոպճապատում՝ 850.0 հազար դրամ:
1/5 Համայնքի Գ.Տոնոյանի անվան միջնակարգ դպրոցի մեկ դասասենյակի հին պատուհանների փոխարինում նորով 920.0 հազար դրամ:
1/6 Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի ձեռք բերման գումար՝ 430.0 հազար դրամ
1/7 Համայնքի կենցաղային աղբահանություն 1050.0 հազար դրամ
2. Համայնքի ղեկավար Վ.Խանաղյանը ներկայացրեց համայնքում առկա խնդիրները և 2019 թվականի 1-ին կիսամյակում կատարվելիք աշխատանքները: Անդրադարձան առավել կարևոր խնդիրներին.
2/1 Մանկապարտեզի շենքի կառուցում
2/2 Ներքին ոռոգման համակարգի կառուցում 3 կմ
2/3 Համայնքի քարտեզագրում 4000.0 հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԽԱՆԱՂՅԱՆ